Արձանագրություն N 2

2026 թվականի Առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ դեղերի ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/7» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «06» «Նոյեմբերի» 2025թ.
ժամը 16:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Հ. Մնացականյան
Հանձնաժողովի անդամներ Մ. Հարությունյան, Ն. Դանիելյան

Հանձնաժողովի քարտուղար Հ. Սարգսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Հ. Մնացականյան)

Ընդունել ի գիտություն, որ 18.08.25թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2025 թվականի սեպտեմբերի 10-ին, ժամը 12:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2025 թվականի սեպտեմբերի 11-ին ժամը 12:00-ին: 2025 թվականի սեպտեմբերի 12-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով, սակայն գնահատող հանձնաժողովի քարտուղարի հիվանդության և անաշխատունակության մեջ գտնվելու պատճառով հայտերի բացման գործընթացը կասեցվել է, մինչև վերջինիս աշխատանքի ներկայանալը՝ 13.10.2025թ.:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Լե Լաբոդատուար» Ս.Ա.Ս	Gagik.velijanyan@servier.com	
2	«Արփիմեդ» ՍՊԸ	info@arpimed.com	03519299
3	«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ	tender@theopharma.am	00471216
4	«ԱԷՄՋԻ» ՍՊԸ	Amg.llc@list.ru	02863111
5	«Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ	tender@lambronpharm.am	02542882

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Հ. Մնացականյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Հ. Մնացականյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրում գնահատող հանձնաժողովը արձանագրել է անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշեց 14.10.2025թ. կասեցնել հայտերի գնահատումը մեկ աշխատանքային օրով և էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով ծանուցել մասնակցին համապատասխան շտկումներ անելու մասին՝

«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ

«Հարգելի մասնակից 4-րդ չափաբաժնի մասով՝ առկա է անհամապատասխանություն, մասնավորապես, տեխնիկական բնութագրերը ներկայացված է թերի: Հետևաբար անհրաժեշտ է շտկել՝ հստակ նշելով ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը և արտադրողի անվանումը: Անհրաժետ է նաև ապահովել չգրանցված դեղերի համար պահանջվող, ինչպես նաև չգրանցված դեղեր ներկայացնելու համար անհրաժեշտ տեղեկանքների ներկայացումը հրավերով սահմանված կարգով՝ ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 2-ի թիվ 502-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան: Շտկված տարբերակներն անհրաժեշտ է ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:»

Շտկման համար սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ համակարգում հասանելի էր մասնակցի կողմից իրականացված շտկումները և գնահատող հանձնաժողովը գնահատելով շտկված փաստաթղթերը գնահատեց բավարար առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

- «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից իրականացված շտկման արդյունքում արձանագրել է հետևյալը՝ 4-րդ չափաբաժնի համար ներկայացվել են միայն ՀՀ-ում չգրանցված դեղեր, ուստի համաձայն ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 2-ի թիվ 502-Ն որոշման 2.2 կետի պահանջների՝ նշված դեղերի համար «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ն պայմանագրի և որակավորման ապահովումների հետ միաժամանակ չգրանցված դեղերի համար պարտադիր պետք է ներկայացնի Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից տրված հավաստող տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի N 172-Ա որոշմամբ սահմանված միջազգային մասնագիտական կազմակերպության կամ ԵԱՏՄ անդամ հանդիսացող երկրներում գրանցված լինելու, կամ Առողջապահության համաշխարհային կազմակերպության նախաորակավորում ունենալու մասին, և պայմանագրեմ կներառվեն միայն հրավերի պահանջներին բավարարող դեղերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկաց գների մասին

(Հ. Մնացականյան)

Մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները 11.09.2025թ.-ին կայացած հակադարձ աճուրդից հետո ներկայացվում են կից ֆայլով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Հ. Մնացականյան)

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին

(Հ. Մնացականյան)

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/7» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝

1. «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ն՝ 4-րդ չափաբաժնի մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Ընթացակարգի ամփոփման մասին

(Հ. Մնացականյան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը՝

Որոշվեց.

1. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/7» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթող ճանաչել և կնքել պայմանագիր՝
   - «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ն՝ 4-րդ չափաբաժնի մասով, 93,600,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:
2. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ մերժել «Լե Լաբոդատուար Սեղվիե» Ս.Ա.Ս-ի, «Ռիխտեր-Լամբրոն», «ԱԷՄՋԻ» և «Արփիմեդ» ՍՊԸ-ների հայտերը:
3. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/7» ծածկագրով գնման ընթացակարգըվվվ հայտարարել չկայացած 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

4. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/7» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 07.11.2025թ.-ից մինչև 16.11.2025թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ. Մնացականյան

Անդամներ՝ ---------- Մ. Հարությունյան

---------- Ն. Դանիելյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան

Գնառաջարկներ ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/7, 1EUR=447.70 ՀՀ դրամ

Չափաբաժնի համար	Ձբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Անվանումը	Քանակ	Նախահաշվային միավորի գին	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Միավորի գին	
							Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	1	Լե Լաբորատուար Սեղվիե Ս.Ա.Ս	գլիկլազիդ	20,000,000.00	22.35	447,000,000.00	1340000 EUR	268000%	1608000 EUR	599,918,000.00	119,983,600.00	719,901,600.00	30.00	36.00
2	1	Արփիմեդ ՍՊԸ	մետֆորմին	21,000,000.00	10.27	215,670,000.00	197,750,000.00	39,550,000.00	237,300,000.00	197,750,000.00	39,550,000.00	237,300,000.00	9.42	11.30
3	1	Արփիմեդ ՍՊԸ	գլիմեպիրիդ, մետֆորմին (մետֆորմինի	10,617,000.00	15.80	167,748,600.00	153,769,550.00	30,753,910.00	184,523,460.00	153,769,550.00	30,753,910.00	184,523,460.00	14.48	17.38
4	1	Թեոֆարմա Իմպորտ ՍՊԸ	ադալիմումաբ 40մգ	1,800.00	69,736.84	125,526,312.00	104,605,255.00	20,921,051.00	125,526,306.00	78,000,000.00	15,600,000.00	93,600,000.00	43,333.33	52,000.00
4	2	ԱԷՄՋԻ ՍՊԸ	ադալիմումաբ 40մգ	1,800.00	69,736.84	125,526,312.00	105,666,666.67	21,133,333.33	126,800,000.00	84,005,480.00	16,801,096.00	100,806,576.00	46,669.71	56,003.65
4	3	Ռիխտեր-Լամբրոն ՀՁ ՍՊԸ	ադալիմումաբ 40մգ	1,800.00	69,736.84	125,526,312.00	104,604,000.00	20,920,800.00	125,524,800.00	100,419,840.00	20,083,968.00	120,503,808.00	55,788.80	66,946.56